ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ԴԵՐԱՑԻՆ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

Կազմեց՝ Ռուզան Մանվելի Մաթևոսյան

(անուն,ազգանուն,հայրանուն)

Կապանի թիվ 13 հիմնական դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(Վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն----------

Գլուխ 1.Հեքիաթի դերը երեխայի կյանքում----------

1. 2.Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում----------

Գլուխ 2.Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում----------

2.1.Բանավոր խոսքի զարգացման և դերային խաղերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում-

Եզրակացություն----------

Օգտագործված գրականություն----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է,ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը>>

Հովհաննես Թումանյան

Հեքիաթը, պատկերավոր ասած,մանկան խոսքի ու մտքի կրակը բորբոքող թարմ քամի է...

Վ.Ա.Սուխոմլինսկի

Դպրոցական կրթության հիմնական նպատակը աշակերտի անհատականության ձևավորումն է:Ընթերցանությունը որպես ակադեմիական առարկա,իր տրամադրության տակ ունի անհատականության վրա ազդելու այնպիսի հզոր միջոց,ինչպիսին գեղարվեստական գրականությունն է:Այն ունի զարգացման և դաստիարակության հսկայական ներուժ. երեխային ծանոթացնում է մարդկության հոգևոր փորձառությանը,զարգացնում է նրա մտքը,ազնվացնում է նրա զգացմունքները:Որքան խորն ու լիարժեք է ընկալվում ընթերցողի կողմից այս կամ այն ստեղծագործությունը,այնքան մեծ ազդեցություն է ունենում նրա անհատականության վրա:

Լինելով հայ ժողովրդական բանահյուսության ամենահին,ամենատարածված ու ամենահարուստ ժանրերից մեկը՝ հեքիաթը երբեք չի կորցնում իր արդիականությունը:Հեքիաթներ ուսումնասիրել և գրել են շատերը և իրենց կարծիքն են արտահայտել:<<Հեքիաթները անդունդներ են՝խորը ,անծայր,անվերջ...Նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում գրել,բայց հեքիաթների են ձգտում>>:[Թումանյան]

Աղայանը հիացմունքով նշում է.<<Իմ պատկերացմամբ հեքիաթը շատ և շատ նման է մայրական կաթին.կաթը կորչում է,բայց նրա արդյունքը չի կորչում:Հեքիաթը մեր տաղանդի ,մեր երևակայության կաթն

է:Իմ նպատակն է հեքիաթի միջոցով հեքիաթային աշխարհ մտցնել փոքրիկին ,որպեսզի նա մտնի դրական հերոսի կերպարի մեջ ,լինի նրա պես բարի,քաջ,ազնիվ>>:

Բացի այդ ,հեքիաթները ոչ միայն արծարծում են իրական կյանքի հիմնախնդիրներ,այլև հուշում են դրանց լուծման բանալիներ ,հնարավորություն տալով տարբեր տարիքում և միջավայրում խնդիրներն ու լուծումները ընկալել նորովի ՝ էվոլյուցիոն ընթացքով զարգացնելով մտածողությունը ,ձևավորելով աշխարհի մասին ամբողջական վերաբերմունք:Հեքիաթը տալիս է անհրաժեշտ փորձի տիրույթ,ստեղծում է յուրահատուկ ,անհամեմատելի տրամադրություն,հարուցում է բարի ու լուրջ ապրումներ:Այն օգնում է վերակենդանացնել մեր մշակույթի հոգևոր փորձը և մեր ժողովրդի ավանդույթները.Այն սովորեցնում է բարություն և արդարություն:

Թեմայի արդիականությունը:Հեքիաթն այնպիսի ժանր է,որի մասին խոսել են երեկ,խոսում են հիմա և կխոսեն վաղը:Հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք և նպաստում է մատաղ սերնդի ,մասնավորապես կրտսեր և միջին դպրոցականների աշխարհայացքի ,բնավորության ձևավորմանը,սովորեցնում լինել համարձակ ,նախաձեռնող,լավատեսորեն տրամադրվող՝ փորձությունները հաղթահարելիս:Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով,որ հեքիաթներում արտացոլված երևույթները ՝ հայրենասիրություն,աշխատասիրություն,համառություն,նպատակասլացություն,բարություն,յուրաքանչյուր սերնդի,յուրաքանչյուր անհատի դաստիարակության կարևոր բաղադրիչներն են,իսկ հեքիաթները նպաստելով այդ հատկանիշների ձևավորմանն ու ամրապնդմանը,մշտապես ուղեկցում են դպրոցականներին:

<<Հեքիաթը մանկական կատարյալ ստեղծագործության այն պատուհանն է,որից հառազած լույսը ջերմացնում է մանուկ ընթերցողին,ձևավորում նրա հոգին:Այդ լույսն է օգնում նրան տեսնելու ,ընկալելու աշխարհի երևույթները,առարկաները,նրա առջև բացում կյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ>>:[Ս.Մուրադյան]

Հեքիաթը գեղեցիկ հյուսվածք է գունագեղությամբ և գեղարվեստական հնարքներով առանձնացվող ժողովրդական լեզվով համեմված մի գոհար:

Թեմայի նպատակն է պարզաբանել ու ներկայացնել հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների անձի ձևավորման և զարգացման գործընթացում:Հեքիաթների ունկնդրմամբ,դերային խաղի միջոցով ձևավորել հարուստ բառապաշար,զարգացած երևակայություն:

Թեմայի խնդիրներն են՝

1.Բացահայտել հեքիաթի դերը երեխայի ուսուցման,դաստիարակության գործընթացում :

2.Ներկայացնել հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ:

3.Երեխայի ստեղծագործելու,խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն:

4.Երեխայի զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակության վերհանում:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքերը:Աշխատանքը կատարել եմ ՝ ուսումնասիրության ենթարկելով աշակերտների կրթադաստիարակչական զարգացման ողջ ընթացքը:Այն կազմված է ներածությունից,երկու գլուխներից,որոնք ունեն նաև ենթագլուխներ,եզրակացությունից և օգտագործված գրականությունից:

ԳԼՈՒԽ 1

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՑԻ ԿՑԱՆՔՈՒՄ

Հեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին,ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է:Նրա ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է:Այն բանավոր ,արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝հիմնված երևակայական հնարանքի վրա,հնարանք,որի բազմապիսի և ավանդական ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում:

Հեքիաթը սկզբնապես սերտորեն կապվել է առասպելաբանության,դիցաբանության հետ:Նրանում պատկերված անիրական,անբնական աշխարհին հավատում են թե «ասացողները»,թե լսողները:Նանց հրապուրում են ոչ միայն բացառիկ դրությունները ու անակնկալները ,այլև երևակայական կեղևով պատած ժողովրդական այն իդեալները ու գաղափարները,այն լավագույնն ու բաղձալին,այն հարուստ կենսափիլիսոփայությունը ,որոնցով ողողված են հեքիաթները:

Հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհզարգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը,դարավոր պայքարը կեղեքիչների դեմ,նրա ազատատենչ և ըմբոստ ոգին,խաղաղ ստեղծագործ աշխատանքի անկոտրում ձգտումը ,ժողովուրդների բարեկամությունը ,նրա վառ հայրենասիրությունը,լավատեսությունը և բոլոր այն լավագույնը,ինչ ձեռք է բերել նա իր պատմական զարգացման ճանապարհին:

Հեքիաթների մեջ տեսնելով ժողովրդի հանճարի ուժը,նրա հզոր երևակայությունը՝ Ուշինսկին դրանք անվանում է «ժողովրդական մանկավարժության փայլուն փորձեր,որի հետաքրքրական սյուժեն համակում է երեխայի էությունը ,իսկ հաճախ կրկնվող բառերն ու դարձվածքները երեխային ոչ միայն լեզու են սովորեցնում,այլև նկարագրվող դեպքերն ու հերոսները չափազանց արագ կերպով տպավորվուն են նրա հիշողության մեջ ՝ իրենց բոլոր գեղեցիկ հատկություններով»:

Հեքիաթները սովորաբար բաժանվում են երեք խմբի,որոնցից առաջինը ՝կենդանական,երկրորդը՝ հրաշապատում կամ կախարդական,իսկ երրորդը՝ իրապատում կամ կենցաղային,երգիծական հեքիաթներ:

Կենդանական հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից և կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ:Ապրելով բնության մեջ ՝մարդը շատ հաճախ շփվում էր նաև վայրի կենդանիների հետ և ձգտում հասկանալ նրանց «լեզուն»,նրանց «վարքն ու բարքը»,նրանց «բնավորությունը»: Կենդանական հեքիաթները ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններ են ,որոնց համար բնորոշը ողջ առարկայականի և հատկապես բնության երևույթների և կենդանիների անձնավորումն է,մարդկայնացումը:Երեխաների համար միշտ էլ տարօրինակ է եղել այն հանգամանքը,թե ինչու իրենք խոսում են ,իսկ կենդանիներն ու բույսերը չեն խոսում և միանգամայն հավանական են համարում նրանց խոսելու կարողությունը:

Այդ առիթով ասվել է.«Եթե դուք երեխաներին հրամցնեք մի այնպիսի հեքիաթ,որտեղ աքաղաղն ու կատուն չխոսեն մարդկային լեզվով,երեխաները չեն հետաքրքրվի դրանով»:

Այդ կարգի հեքիաթների մեջ կենդանիներն ու գազանները մարդու բարեկամներն են,նրա հավատարիմ օգնականները:Նրանց գազանային գիշատիչ հատկանիշները ետ են մղված.առավել ցայտուն է արտահայտված մարդկայինը,քան կենդանականը:Հանգամանքների բերումով նրանք մերթ զայրանում են,մերթ

մերթ հանդարտվում,մերթ ատում են,մերթ սիրում,մերթ տխրում են,մերթ ուրախանում,և այդ նույն զգացողությունները փոխանցվում են փոքրիկներին:

Ծագումով և կազմավորմամբ համեմատաբար հին են նաև հրաշապատում կամ կախարդական հեքիաթները:Դրանք սովորաբար սկսվում են «Ժուկով ժամանակով», «Ժամանակով կար չկար» արտահայտություններով:Այս հեքիաթներում ամեն ինչը հորինված է,տեղը,ժամանակը՝ անորոշ:Այս հեքիաթներում մեծ տեղ է տրվում սյուժեի զարգացմանն օգնող արտաքին ուժերին՝ հրաշք թռչուններին,իմաստունին,թռչող ու խոսող ձիերին,շանը,կատվին,ոգիներին,ծեր կանանց,վհուկներին,անհունչ առարկաներին (սփռոց,թաշկինակ,մատանի,թռչող գորգ,կախարդական փայտիկ) և այլն:

Իրապատում կամ կենցաղային հեքիաթներում խսպառ բացակայում են երևակայական հնարքները:Այստեղ նկարագրվում են հասարակական կյանքը,մարդկային,դասային դասակարգային փոխհարաբերությունները իրական գույներով:Նրանց մեջ մեծ տեղ է գրավում սատիրան,որը խորապես սոցիալական է ու սպանիչ:Ծաղրվում է հիմարությունը,տգիտությունը,ծուլությունը,երկչոտությունը:Իրապատում հեքիաթների դրական հերոսներն են՝ գյուղացին,աշխատավորը,ծառան ,բացասականը՝ տերը,դատավորը,քահանան:Հեքիաթի հիմքում ընկած է շահագործողի և շահագործվողի միջև ընկած պայքարը,որն ավարտվում է շահագործվողի հաղթանակով:

Ուսումնասիրելով հեքիաթների տարատեսակները և առանձնացնելով յուրաքանչյուրի առանձնահատուկ գծերը՝ դժվար չէ նկատել,թե ինչ կարևոր նշանակություն ունեն դրանք երեխաների մարդասիրական,բարոյական,գեղագիտական արժեքների ձևավորման,նրանց ընդունակությունների բացահայտման,մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման գործընթացում:Ըստ այդմ

կարելի է ասել,որ հեքիաթները դարեր շարունակ կրթել և դաստիարակել են մանուկներին,առաջացրել սեր աշխատավոր ժողովրդի նկատմամբ և ատելություն՝ տիրողների ու բռնակալների հանդեպ:

1.1ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խոսել երեխայի կյանքում հեքիաթի հսկայական նշանակության մասին և չանդրադառնալ դաստիարակչական կողմին՝ նշանակում է պարզապես աչքաթող անել հեքիաթի հիմնական առաքելությունը՝ մարդասիրական արժեքների դաստիարակումը:

Յուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյական կարևոր սկզբունքներ,որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ,այլ արտահայտվում են հերոսների արարքների ,խոսքերի միջոցով:Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու,զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը:Երեխայի հոգում անկեղծ զգացումը դառնում է այն կենարար ջուրը,որը ցրում է թախիծը,թեթևացնում վիշտը,վերադարձնում ուրախությունը:«Հեքիաթը երեխային պետք է կողմնորոշվելու,իրեն ուսումնասիրելու,իր հնարավորությունները չափելու,գնահատելու համար»:[Ջանի Ռոդարի]

Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար,արտահայտել իր մտորումները,որոնել է իր կրած տառապանքների պատճառները,պայքարի կոչ է արել ամեն տիպի անարդարության ու շահագործման դեմ:

Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության,անվեհերության,խելքի ու հնարամտության օրինակներով,դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով,չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով:

Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա,կուղղի և կլավացնի նրա պահվածքը,ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:

Այսպիսով ,հեքիաթը ողողված է մարդասիրական վեհ գաղափարներով.այն իր մեջ ընդգրկում է այն լավագույնը,որը ձեռք է բերել մարդկությունը,և այդ ամենը համակում է երեխաների սրտերը,քանի որ «որքան փոքր է երեխան,այնքան ավելի հեշտ է նրա մեջ արթնացնել բարի զգացումներ և ոգեշնչել բարի գործերի:Փոքր երեխաները ձգտում են բարություն անել իրենց արարքներով,նրանց զգացմունքներն ապրում են այն արարքներում,որոնք արտահայտում են նրանց վերաբերմունքը ուրիշ մարդկանց նկատմամբ»:

Կարդալով հայկական ժողովրդական հեքիաթները՝երեխաներն ըմբռնում են բարու և չարի,ազնվության և անազնվության,արդարացիության և անարդարացիության էությունը:Լավատեսությունը ժողովրդական ժողովրդական հեքիաթի կարևոր հատկանիշներից մեկն է:Ամենածանր պայմաններում էլ նա հավատով է լցված դեպի ապագան և պայքարում է նրա համար:Հեքիաթի դրական հերոսը գրեթե միշտ ծանր պայմանների մեջ է լինում,բայց երբեք չի հուսալքվում,զգում է իր գործի ճշմարտացիությունը և ձգտում անմահության դափնին:Հեքիաթներում ժողովուրդը միշտ դրական հերոսի համար ապահովում է բարոյական հաղթանակը,որով և իր սերունդներին ապագա հաղթանակի,ապագա հավասարության հավատն է ներշնչում:

«Լինելով միշտ լուսամիտ,լավատես,բարուն,առաջադիմականին ձգտող՝ ժողովուրդը շարունակ անդրադարձել է մարդու առավել մաքրագործմանը,կատարելագործմանը,երգիծանքի թիրախ դարձրել այն թուլությունները,արատները,որոնք խոչընդոտել են հասարակական կյանքի առաջընթացը»:[Ս.Սարգսյան]

Այդ արատներից են՝

ծուլությունը,երկչոտությունը,բացբերանությունը,ժլատությունը,անիմաստասիրությունը,անհեռատեսությունը, հավակնոտությունը,ապաշնորհությունը:

Հեֆիաթն անբաժան է գեղեցկությունից:Այն նպաստում է գեղագիտական ճաշակի զարգացմանը,առանց որոնց անիմաստ են հոգու ազնվությունն ու զգայունությունը մարդու դժբախտության,վշտի,տառապանքի նկատմամբ:

Գեղեցկությունը բարոյական մաքրության,հոգևոր հարստության,ֆիզիկական կատարելության հզոր աղբյուր է:Հեֆիաթի միջոցով է տեղի ունենում երեխայի առաջին հանդիպումը գեղեցկության հետ:Իսկ որպեսզի երեխայի մեջ ձևավորվեն գեղագիտական արժեքներ,նա պետք է ծանոթ լինի բնությանը,ճանաչի այն:Կրտսեր դպրոցական տարիքում բնության հետ երեխան ծանոթանում է հեքիաթի միջոցով:«Եթե երեխայի սրտում ծաղկի գեղեցկությունը,ապա երեխան աշխարհը կճանաչի ոչ միայն մտքով,այլև սրտով»:[Սուխոմլինսկի] Այսինքն ՝ գեղեցկությունը և կենդանի միտքը կապված են միմյանց հետ,ինչպես արևն ու ծաղիկները.եթե արևը ծաղիկներին ջերմություն և լույս է տալիս,որի շնորհիվ նրանք ծաղկում են,ապա երեխայի սրտում ծաղկած գեղեցկությունն էլ զարգացնում է նրա միտքը,արթնացնում է ստեղծագործական միտքը:Գեղեցկությունն է այն հզոր ազդակը,որի շնորհիվ կատարելության հասավ մարդը:«Մարդը մարդ դարձավ,երբ լսեց տերևների շրշյունը և մրրիկի ոռնոցը պատուհանի տակ,ալիքի փաղաքուշ ճողփյունը և գիշերվա հանդիսավոր լռությունը»:[Սուխոմլինսկի]

Գեղեցիկի հանդեպ զարմանքը,հիացմունքը,ակնածանքը, մանկության տարիների այն տարրն է,առանց որոնց անհնար է իսկական դաստիարակությունը,մարդկային քաղաքավարության իսկական ձևավորումը:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հեքիաթն ունի հսկայական նշանակություն կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում:Այն համարվում է նրանց տրամաբանական ճանաչողական,խոսքային ընդունակությունների բացահայտման ու զարգացման միջոց:Այդ տարիքում երեխային անհրաժեշտ է (արտաքին միջավայրի հետ շփվելու և հաղորդակցվելու համար)ձևավորել խոսք :«Լեզվի բոլոր հնարավորություններին ազատ տիրապետելը միայն մեկն է այն ուղղություններից,որոնցով դա կարող է զարգանալ»:Այսինքն ՝ լեզվի միջոցով երեխան զարգանում է:«Ուսուցիչներին միշտ անհանգստացնում է այն փաստը,թե ինչպես անել,որ երեխաները խորապես իմանան մայրենի լեզուն,որ մայրենի բառը մտնի նրանց հոգեկան կյանքի մեջ,դառնա և սուր,դիպուկ,և գունեղ ներկապնակ ,և իրականությունը ճանաչելու նուրբ միջոց»:[Վ.Ս.Սուխոմլինսկի] Լեզուն մտքի նյութական արտահայտությունն է,և երեխան դա կիմանա միայն այն ժամանակ,երբ իմաստի հետ միասին ընկալի վառ հուզական երանգավորումը,մայրենի բառի երաժշտության կենդանի թրթիռը:«Առանց բառի գեղեցկությունն զգալու՝ երեխայի համար անհասկանալի են նրա իմաստի նվիրական սահմանագծերը:Իսկ գեղեցկության զգացումն անիմաստ է առանց երևակայության,առանց երեխաների

անձնական մասնակցության ստեղծագործության մեջ,որի անունն է հեքիաթ:Այդ ստեղծագործությունը սկսվում է հենց պատմելու ընթացքում»:Երբ մենք երեխայի համար հեքիաթ ենք ընթերցում կամ պատմում,ապա անպայման պետք է թույլ տանք,որ երեխան այդ նույն հեքիաթը պատմի,որի շնորհիվ էլ կզարգանա նրա խոսքը:«Հեքիաթը բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոցներից է»[Գյուլամիրյան]:Իսկ երեխաների մոտ կապակցված խոսք կառուցելու կարողությունը ոչ միայն անհրաժեշտ է մայրենիի դասերին,այլև ցանկացած այլ առարկայի ուսումնասիրման համար:Փաստորեն հեքիաթը համարվում է այն առաջնայինը,որի միջոցով ինքնաբերաբար բացահայտվում են երեխաների ընդունակությունները ու կարծես «ջրի երես»են դուրս գալիս երեխայի այն դրական կողմերը,որի վրա հենվելով կարելի է «երեխայի ձեռքից բռնած»նրան ուղեկցել դեպի կյանք,որպեսզի նա կարողանա քայլել նույնիսկ «երկրային կյանքի նեղ արահետով»,հուսալով,որ միշտ բարին հաղթելու է չարին:

Երբ երեխան արդեն կարողանում է պատմել հեքիաթը,կարելի է այն նաև բեմականացնել,որի ժամանակ կրտսեր դպրոցականը ամբողջությամբ մտնում է հեքիաթի հերոսների դերի մեջ,ավելի պատկերավոր ու գունեղ է դառնում նրա համար հեքիաթը:«Դա մի ամբողջ աշխարհ է,ուր երեխան ապրում է,պայքարում,չարին հակադրում իր բարի կամքը»:[Սուխոմլինսկի] Եթե ցանկանում ենք երեխային մտածել սովորեցնել,ապա նախ և առաջ պետք է հորինել սովորեցնենք:Դրա համար պետք է զարգացնել նրա ստեղծագործական երևակայությունը,որին օգնում է հեքիաթներ ընթերցելը,ապա՝ պատմելը:Երեխայի պատմություն հորինելը ստեղծագործական գործողություն է,որը տվյալ դեպքում հետաքրքրում է ստեղծագործական կայծի բացահայտման տեսանկյունից: Կրտսեր դպրոցականներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով,փոփոխելով պատմելը,շարունակություն հյուսելը,որը ոչ միայն նպաստում է խոսքի զարգացմանը,այլև երևակայության թռիչքին:Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել

նաև ուսուցչի «կազմած» նկարներով պլանը: Այս եղանակով դասարանի բոլոր աշակերտները կկարողանան պատմություն հորինել:

Շահեկան է նաև երեխաներին հանձնարարել անգիր սովորել այն չափածո տողերը,որոնք հաճախ են կրկնվում հեքիաթում,և պատմելիս անգիր արտասանել դրանք:

Հեքիաթի ուսուցման ժամանակ կարելի է նաև կիրառել հետևյալ խաղը՝ «Օգնիր հերոսին գտնել իր հեքիաթը»:Այս խաղի շնորհիվ սովորում ենք ճանաչել հեքիաթը՝ կարդալով դրվագը:

Նպատակներն են՝

1. Երեխաների մեջ սերմանել ժողովրդական արվեստի հանդեպ սեր:
2. Ամրապնդել հեքիաթների մասին ունեցած գիտելիքները:
3. Հիշել հեքիաթների հերոսներին,նրանց անունները և բնութագրել:
4. Հետաքրքրություն ձևավորել ընթերցանության նկատմամբ:

Ուսուցիչ.«Մի անգամ հեքիաթի հերոսները որոշեցին անկարգություն անել և դուրս եկան իրենց գրքի էջերից, իսկ հետո չկարողացան գտնել իրենց տեղն ու վերադասավորվել»:

Ինձ անհրաժեշտ է ձեր օգնությունը:Ես կընթերցեմ հեքիաթներից հատվածներ,իս դուք կասեք,թե որ հեքիաթից է կարդացվել հատվածը,ով է հերոսը:Եթե ճիշտ պատասխանեք,բոլոր հեքիաթները կվերականգնվեն:

Երեխաները ճանաչում են հեքիաթների հերոսներին,անվանում և համառոտ նկարագրում նրանց,գտնում են այն գիրքը,որտեղ ապրում են նրանք:Հերոսները «տեղավորվում են» իրենց հեքիաթներում:Հաղթում է այն թիմը,որը ավելի շատ է գուշակում հերոսներին:

2.2ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԵՐԱՑԻՆ ԽԱՂԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դերային խաղն ուսուցման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է:Կրթական ծրագրերում,ուսուցիչն աշակերտներին կարող է անսպասելի իրավիճակներ առաջարկել,որի ժամանակ նրանք պետք է ընդունեն որևէ դեր կամ տեսակետ,այնուհետև փորձել կատարել ու ավարտին հասցնել:Այն աշակերտները,ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին,ստանձնում են դիտորդի դերը և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում:Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է,որը կարելի է ուսուցանել դերերով և բեմականացնել:Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին,սակայն դերերով խաղից առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն,կերպարների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում,նրանց՝ որոշակի դեպքերում դրսևորած վարքի դիտարկում,ընտրովի խաղ:Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը:

Արդյունավետությունն է.

- Ձեռք բերված փորձը պահպանվում է երկար:
- Այն գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է:
- Այն հնարավորություն է տալիս աշակերտներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ:

Դերային խաղի բուն ընթացքից հետո իրականացվում է քննարկում,որի ժամանակ ուսուցիչը.

- Հանում է աշակերտների դերից:
- Հստակեցնում է իրենց հետ կատարվածը:
- Քննարկում է նրանց սխալները:
- Բացահայտում է նրանց դիրքորոշումները,զգացմունքները,փոփոխությունները,որոնք առկա էին բուն դերային խաղի ընթացքում:
- Աշակերտներին ինքնադիտարկման հնարավորություն է տալիս:
- Համադրում է դերային խաղի արդյունքները առաջադրված նպատակների հետ:
- Վերջնարդյունքների վերաբերյալ վերլուծություններ է իրականացնում:
- Կատարվում է անդրադարձ:

Եվ կապում է դերային խաղը իրական կյանքում հասանելի տեսական նյութերի հետ:Դերային խաղը հաճախ անհրաժեշտ է աշակերտների միջանձնային հարաբերությունները,միմյանց հետ համագործակցելու կարողությունները,իրար լսելու և միմյանց խոսքը ընբռնելու,ինչպես նաև առաջադրված դերը ճիշտ և անսխալ կատարելու գործընթացում:

Երեխաների համար դերային խաղերը շատ օգտակար են:Երազային ու երևակայական աշխարհում իրական հերոսների պես զգալը շատ առավելություններ է տալիս նրանց:Դերախաղերը օգնում են խթանել ինչպես ստեղծագործական,այնպես էլ երևակայական մտածողությունը:Դասարանի առջև խոսելով՝ բարելավում է նրանց սոցիալական հմտությունները:Դերախաղերում երեխաները իրենց տարբեր կերպարներում են տեսնում՝ զարգացնելով հուզակամային որակները:Կենտրոնանալով իրենց ներկայացրած հերիաթի վրա,այն կապում են իրականությանը:

Դերային խաղերի մեկ այլ առավելությունն այն է,որ դրանք թույլ են տալիս զարգացնել երեխաների հիշողությունը:Դերախաղ ունեցող երեխաները ցանկացած պահի կսովորեն,որ իրենց բոլոր գործողությունները մի շարք հետևանքներ կունենան:Նրանք հասկանում են,որ իրենք պետք է պատասխանատու լինեն իրենց բոլոր գործողությունների համար:

Անցկացրել եմ հարցում տասը դասվարի շրջանակում՝ «Ի՞նչ միջոցներով են խթանում աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքները»:Հարցին դասվարներից 6-ը (60%) նշել են հեքիաթի միջոցով,2-ը (20%) նշել են դաս-էքսկուրսիաները,իսկ 2-ը՝ (20%)խաղերը:

Հարցումից հետո եկա այն եզրակացության,որ հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ երեխաների ուսուցման,դաստիարակության,ընթերցանության,դերային խաղերի գործընթացում կարևորը հեքիաթն է:



ԴԱՍԱՊԼԱՆ

Դասարան՝2-րդ

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ ժողովուրդն իմաստուն է « Երեք աղջիկների հեքիաթը»

Դասի տիպը՝Նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝ 1.Ձևավորել սեփական անձի գնահատում և վստահություն իր ուժերին,իր ազգային պատկանելության գիտակցում,հարգանք դիմացինի արժանապատվության նկատմամբ,բարին,մարդկայինը տեսնելու,ընկալելու և գնահատելու կարողություն:

2.Կարդալու որակական հատկանիշների ,տեքստն ընտրովի և դերերով կարդալու կարողությունների,տեքստի բովանդակությանը համապատասխան ՝ խոսքի և ընթերցանության տեմպի կառավարման մշակում:

Դասի խնդիրները՝1.Կտարբերակեն առարկա,հատկանիշ,գործողություն ցույց տվող բառերը:

2.Կխորացնեն ժողովրդական բանահյուսության նմուշների՝հեքիաթ,հանելուկ,ասացվածք,շուտասելուկ,սուտասելուկ մասին ունեցած գիտելիքները:

Ակնկալվող վերջնարդյունքները՝1.Պատկերացնել որոշ գրական ստեղծագործությունների կապը ժողովրդի և պատմության մշակույթի հետ:

2.Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը,գնահատել գործող անձանց վարքագծի դրդապատճառները,ապրումակցել հերոսներին:

Անհրաժեշտ պարագաներ՝ ստվերաթղթից պատրաստված մեծ կարաս,ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների անունները ստվերաթղթե շերտիկների վրա,պաստառ,ծաղիկներ խմբային աշխատանքի համար,հեքիաթի մասերի քանակով,նախապատրաստել ֆիլմի ժապավենի տեսքով ստվերաթղթեր:

Միջառարկայական կապը՝ կերպարվեստ,տեխնոլոգիա

Խթանում Գրատախտակին գրել կամ ամրացնել թերի նախադասության սկիզբը՝ Ժողովուրդն...,և առաջարկել սովորողներին ավարտել,ամբողջացնել այն:Սովորողների առաջարկած տարբերակները գրել գրատախտակին:Եթե դրանց մեջ լինի նաղագծի վերնագիրը կամ դրան մոտ տարբերակը,առանձնացնում ենք:Նշում ենք,որ սկսում ենք մի թեմայի ուսումնասիրություն,որի խորագիրը հենց առանձնացված նախադասությունն է՝Ժողովուրդն իմաստուն է:



Իրականացման փուլ՝ Այսօրվա հեքիաթը կազմված է 9 մասից:Ամեն օր կարդալու և քննարկելու ենք հեքիաթի մի հատվածը միայն և արդյունքները արտացոլելու ենք մեկ կադրով:

Հեքիաթի վերնագիրն ամրացնում ենք պատին «Երեք աղջիկների հեքիաթը»:



Բառային աշխատանք Գրատախտակին գրում ենք կարաս,հոր,թզուկ,ջրհոր,հոր,մորուք բառերը և պատրաստում դրանց նկարները:Սովորողների միջոցով բացատրել բառերի իմաստը և յուրաքանչյուր բառի դիմաց փակցնում նկարը:

Թերթիկների վրա մեծ տառաչափով տպել բե«բանը ջուր առնել» և «հինգ մատի պես գիտենալ»դարձվածքները:Սովորողներից մեկին տալ «բերանը ջուր առնել»շերտիկը և խնդրել դերային խաղով ցույց տալ դարձվածքի ուղիղ իմաստը:

Ուսուցչի գործունեություն.Կարո՞ղ ես այդպես խոսել Ուրեմն ի՞նչ է նշանակում այդ արտահայտությունը: Իսկ« հինգ մատի պես գիտենալ»	Աշակերտի գործունեություն.Ոչ Լռել,չխոսել Նշանակում է շատ լավ իմանալ,ճանաչել

Թղթի վրա գրել հանելուկը.

Ի՞նչն է,ի՞նչը.

Ինչքան լցնես,կփոքրանա,

Ինչքան վերցնես,կմեծանա:

Պատասխանը գրել հանելուկի տակ,այնուհետև ընթերցել հեքիաթի առաջին մասը՝հանելուկ,դարձվածք:Հարցերի միջոցով քննարկել այն և անդրադառնալ դասագրքի առաջադրանքներին:

Մեթոդներ՝մտագրոհ,խմբային աշխատանք,քառաբաժան

Ռեսուրսներ՝ https://mm.tt/map/2422971254?t=9z3IrG8u7f



Հեքիաթի բոլոր մասերն ուսումնասիրելուց հետո կիրառել եմ հետյալ գործնական աշխատանքը.Սովորողները նստում են արդեն ձևավորված խմբերով:Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ ծրար,որում «Երեք աղջիկների հեքիաթն»է՝ թղթե քարտերի վրա մասերի բաժանված:Խմբերը դատարկում են ծրարի պարունակությունը սեղանին,կարդա առանձին քարտերի վրա գրվածը,ճիշտ հաջորդականությամբ դասավորի հեքիաթի մասերը և նոր միայն կարդա ամբողջական հեքիաթը:Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է ժողովրդական ստեղծագործության իր մասը:

Դրանից հետո դերային խաղով ներկայացրել ենք «Երեք աղջիկների հեքիաթը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով ուսումնասիրության ենթարկված նյութն,եկել եմ հետևյալ եզրակացության.

Մեզանից յուրաքանչյուրի մանկության վառ հուշերը կապված են այն հեքիաթների հետ,որոնք մենք լսել ենք մեր ծնողներից,մեր տատիկներից և այսօր դրանք պատմում ենք մեր երեխաներին:Հեքիաթը երեխայի առաջին շփումն ու պատկերացումն է շրջապատող աշխարհի,մարդկանց ,երևույթների,բնության հանդեպ:Նա տեսնում ու լսում է չարի ու բարու,պայքարի ու հաղթանակի,գեղեցիկի ու տգեղի մասին:Ու հենց այստեղ էլ երեխան ձևավորվում է որպես անհատ,ձևավորվում են նրա հայացքները:Հեքիաթը մեզ ուղեկցում է ամբողջ կյանքում:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք,բարոյական կարևոր սկզբունքներ:Այն միաժամանակ ստեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Հեքիաթի հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունն ու ստեղծագործական ունակությունը,ընդլայնել երեխաների բառապաշարն ու տրամաբանական մտածողությունը:Երեխայի խոսքը դառնում է ավելի պատկերավոր:Հեքիաթների միջոցով կարելի է դաստիարակել մարդկային բարձր արժեքներ՝բարություն,հարգանք,մարդասիրություն,աշխատասիրություն:

Հեքիաթն իրականացնում է նաև կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների կարևորագույն որակների ձևավորման գործառույթները:Այն նվազեցնում է բացասական տպավորությունների ազդեցությունը:Հեքիաթի լեզուն լինելով մարդկային փոխհարաբերությունների հիմնական լեզուներից մեկը և միաժամանակ արվեստի հիմնական միջոց,ապահովում է ստեղծագործական կարողությունների բացահայտմանը:Եվ ի վերջո հեքիաթը դառնում է կապող օղակ ուսուցչի և աշակերտի միջև:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հարությունյան «Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում» Երևան ,1959թ.

2.Մուրադյան Ս. «Սերունդների հետ միասին նորանալով»

3.Սուխոմլինսկի Վ.Ս.,« Սիրտս նվիրում եմ երեխաներին»,Երևան «Լույս»,1977թ.

4.Ռոդարի Ջ.,« Ստեղծագործական երևակայության բերականություն»,Երևան «Շաղիկ»,1995թ.

5.Սարոյան Վ.«Հեքիաթի ուսուցման նոր մեթոդներ»,նախաշավիղ ,Երևան,2008թ.

6.Գյուլամիրյան Ջ.,«Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»,Երևան,Զանգակ-97,2006թ.

7.Թումանյան «Ուսումնասիրություններ և հրապարակումներ»,Երևան,1983թ.